ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պնևմակոկային կոնյուգացված պատվաստում.
Ինչ է անհրաժեշտ ձեզ իմանալ

Many vaccine information statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis

1. Ինչո՞ւ պատվաստվել:

Պնևմակոկային կոնյուգացված պատվաստանյութը կարող է կանխել **պնևմակոկային հիվանդությունը**:

Պնևմակոկային հիվանդությունը՝ պնևմակոկային բակտերիաներով պայմանավորված ցանկացած հիվանդությունն է: Այս բակտերիաները կարող են առաջացնել բազմաթիվ հիվանդություններ, այդ թվում՝

- Թոքաբորբ (թոքերի վարակ)
- Ականջի վարակներ
- Սինուսային վարակներ
- Մենինգիտ (գլխուղեղի և ողնուղերի թաղանթի վարակ)
- Բակտերիեմիա (շրջանառվող արյան վարակ)

Թոքաբորբով կարող է վարակվել ցանկացած մեկը, սակայն փոքր երեխաները, տարեց մարդիկ և որոշակի ռիսկի գործոններ ունեցող մարդիկ ամենաբարձր ռիսկի խմբում են:

Պնևմակոկային վարակների մեծ մասը մեղմ է: Սակայն որոշները կարող են հանգեցնել երկարատև խնդիրների, ինչպիսիք են ուղեղի վնասվածքը կամ լսողության կորուստը: Պնևմակոկային հիվանդության պատճառով առաջացած մենինգիտը, բակտերիեմիան և թոքաբորբը կարող են հանգեցնել մահվան:

2. Պնևմակոկային կոնյուգացված պատվաստում

Պնևմակոկային կոնյուգացված պատվաստումն օգնում է պաշտպանել պնևմակոկային հիվանդություն առաջացնող բակտերիայից: Կա պնևմոկոկային կոնյուգացված պատվաստանյութերի (PCV) մի քանի տեսակ: Հատուկ PCV-ն և առաջարկվող դեղաչափերի քանակը հիմնված են անձի տարիքի, պատվաստման պատմության և առողջական վիճակի վրա: Ձեր բժիշկը կարող է օգնել ձեզ որոշել, թե PCV-ի որ տեսակը և քանի դեղաչափ պետք է ստանալ:

- **Նորածիններին և փոքր երեխաներին** սովորաբար անհրաժեշտ է PCV-ի 4 դեղաչափ: Այս դեղաչափերը խորհուրդ են տրվում 2, 4, 6 և 12-15 ամսական հասակում:
- Որոշ **ավելի մեծ երեխաներ և դեռահասներ** , ովքեր նորածնային կամ մանկական տարիքում չեն ստացել խորհուրդ տրվող դեղաչափերը, կարիք ունեն PCV-ի: Սա կախված է տարիքից և առողջական վիճակից, կամ այլ ռիսկի գործոններից:
- **19-ից 49 տարեկան մեծահասակները** , ովքեր չեն ստացել PCV պատվաստանյութ և ունեն որոշակի առողջական խնդիրներ կամ այլ ռիսկի գործոններ, պետք է ստանան PCV: Այս խմբի որոշ մեծահասակների, ովքեր արդեն ստացել են PCV, կարող է խորհուրդ տրվել ստանալ ևս մեկ դեղաչափ:
- **50 տարեկան և ավելի մեծ տարիքի մարդիկ,** ովքեր նախկինում չեն ստացել PCV, պետք է ստանան PCV պատվաստանյութ: Այս խմբի որոշ մեծահասակների, ովքեր արդեն ստացել են PCV, կարող է խորհուրդ տրվել ստանալ ևս մեկ դեղաչափ:

3. Խոսեք ձեր բժշկի հետ

Տեղեկացրեք ձեր պատվաստում իրականացնողին, եթե պատվաստվող անձը՝

- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա PCV-ի որևէ տեսակի նախորդ դեղաչափից կամ դիֆթերիայի տոքսոիդ պարունակող որևէ պատվաստանյութի** (օրինակ՝ DTaP) նկատմամբ, կամ ունի որևէ **ծանր, կյանքին սպառնացող ալերգիա:**

Որոշ դեպքերում ձեր առողջապահական խնամքի մատակարարը կարող է որոշել հետաձգել PCV պատվաստումը մինչև հետագա այցելությունը:

Մարդիկ, ովքեր ունեն թեթև հիվանդություններ, օրինակ՝ հարբուխ, կարող են պատվաստվել: Անձինք, ովքեր միջին կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև կազդուրվելը:

Ձեզ հավելյալ տեղեկություններ կարող է տրամադրել ձեր բժիշկը:

U.S. CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- Պնևմակոկային կոնյուգացված պատվաստումից հետո կարող է առաջանալ կարմրություն, այտուցվածություն, ցավ կամ զգայունություն ներարկման տեղում, ջերմություն, ախորժակի կորուստ, անհանգստություն (գրգռվածություն), հոգնածություն, գլխացավ, մկանային ցավեր, հոդացավեր կամ դող:

Փոքր երեխաները, որոնք PCV են ստանում գրիպի չակտիվացված պատվաստանյութի հետ զուգահեռ, բարձր ջերմության հետևանքով կարող են ցնցումների աճող ռիսկի տակ լինել: Հավելյալ տեղեկությունների համար դիմեք ձեր բժշկին:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բժշկական միջամտություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե գլխապտույտ, տեսողության փոփոխություններ կամ ականջներում զնգոց ունեք:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում է՝ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը կառաջացնի ծանր ալերգիկ ռեակցիա, այլ լուրջ վնասվածք կամ մահ:

5. Ի՞նչ անել, եթե լուրջ խնդիր առաջանա:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ այն բանից հետո, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ եք նկատում (եղնջացան, դեմքի և կոկորդի այտուց, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **9-1-1** և տեղափոխեք անձին մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք ձեր բժշկին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հայտնել Vaccine Adverse Event Reporting System (VAERS) (Պատվաստանյութի անբարենպաստ իրադարձությունների մասին հաղորդման համակարգ): Սովորաբար այս հաշվետվությունը կներկայացնի ձեր բժիշկը, կամ դա կարող եք ինքներդ անել: Այցելեք VAERS-ի կայքէջ՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարեք **1-800-822-7967** հեռախոսահամարով: *VAERS-ը միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար է, իսկ VAERS-ի անձնակազմի անդամները բժշկական խորհրդատվություն չեն տրամադրում:*

6. National Vaccine Injury Compensation Program

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից վնասվածք ստացած մարդկանց: Պատվաստման հետևանքով ենթադրյալ վնասվածքի կամ մահվան վերաբերյալ հայցերի ներկայացման ժամկետը կարող է լինել երկու տարի: Այցելեք VICP-ի կայքէջ՝ www.hrsa.gov/vaccinecompensation, կամ զանգահարեք **1-800-338-2382** հեռախոսահամարով՝ տեղեկանալու ծրագրի և հայցի ներկայացման մասին:

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Դիմեք ձեր բժշկին:
- Զանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Այցելեք Food and Drug Administration (FDA) (Սննդամթերքի և դեղորայքի վարչության) պատվաստանյութի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ) հետ՝
  - Զանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** հեռախոսահամարներով կամ
  - Այցելեք CDC կայք՝ www.cdc.gov/vaccines հասցեով:

Armenian translation provided by Immunize.org